## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
## ՎԱՅՈՑ ՁՈՐԻ
## ՄԱՐԶՊԵՏ

<< 26 >> << դեկտեմբեր>> 2016 թ N 156

ք. Եղեգնաձոր

# ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

## ԱՇՈՏ ՓԱՆԴՈՒՆՑԻՆ ՀՀ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ «ՍԱՐԱՎԱՆ ԳՅՈՒՂԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ-Ի ՏՆՕՐԵՆ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ԵՎ ՆՐԱ ՀԵՏ ԿՆՔԱԾ ԺԱՄԿԵՏԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ ԼՈՒԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 94-րդ հոդվածի 2-րդ մասով, 95-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով, 109-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի ՆՀ-728 հրամանագրի 1.6, 1.16 կետերի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի մարտի 4-ի N319-Ն որոշմամբ հաստատված «Պետական հանրակրթական ուսումնական հաստատության տնօրենի ընտրության (նշանակման) կարգի» 34-րդ կետի պահանջներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի << Սարավան գյուղի հիմնական դպրոց>> ՊՈԱԿ-ի կառավարման խորհրդի նախագահի 2016 թվականի դեկտեմբերի 21-ի N30 գրությունը և Աշոտ Փանդունցի հետ կնքած 2016 թվականի հոկտեմբերի 24-ի N312 ժամկետային աշխատանքային պայմանագրի 6.1 կետի ա) ենթակետը և Աշոտ Փանդունցի դիմումը.

**ԿԱՐԳԱԴՐՈՒՄ ԵՄ՝**

1.2016 թվականի դեկտեմբերի 26-ից Աշոտ Փանդունցին նշանակել Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի << Սարավան գյուղի հիմնական դպրոց >> ՊՈԱԿ-ի տնօրենի պաշտոնում, նրա հետ կնքելով աշխատանքային պայմանագիր՝ 5 /հինգ/ տարի ժամկետով:

2. 2016 թվականի դեկտեմբերի 26-ից լուծել Աշոտ Փանդունցի հետ կնքած 2016 թվականի հոկտեմբերի 24-ի N312 ժամկետային աշխատանքային պայմանագիրը:

3. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Հ. ՍԱՐԳՍՅԱՆ